ՀԱԿՈԲ ՊԵՏՐՈՍՅԱՆ
բանասիրական գիտ. թեկնածու

ՄԵՅԴՈ ՊՈՂՈՍ

Հայ ժողովրդի ազատագրական ընդվզումների պատմության մեջ կարեւոր տեղ է զբաղեցնում ֆիդայական շարժումը, որ սկզբնավորվելով ԺԹ. դարի ութսունականներին՝ հիմնականում ձեւավորվեց ու գոյատեւեց Արեւմտյան Հայաստանի հայկական նահանգներում՝ լինելով նախորդ շրջանի ազատագրական խմորումների օրինաչափ հետեւանք: Շարժումը մեկ անգամ եւս վկայեց երկար ժամանակ ընդարմացած հայության վերազարթոնքը: Ասպարեզ գալով համիդյան Թուրքիայի խառն ժամանակներում՝ ֆիդայիները համոզեցին, որ ազգի ընտրյալների երակներում դեռեւս եռում է, չի չորացել սասունցի դավիթների ըմբոստ ոգին, եւ նրանք ի զորու են մարտնչելու թուրքական կայսրության նման խորամանկ ու վտանգավոր չարիքի դեմ: Այդ անհավասար պայքարում իրենց անունները լուսապսակով զարդարեցին անվանի ու անանուն շատ քաջեր:

Այդ զինվորագրյալներից էր նաեւ մշեցի Մեյդո Պողոսը[1]: Նա ծնվել է Տավրոս լեռնաշղթայի ստորոտներում գտնվող Մշո դաշտի Ալվառինջ հայաբնակ գյուղում, ենթադրվում է՝ 1874 թվականին[2]: Գյուղն ուներ 150 տուն բնակչություն եւ հարուստ էր բերքառատ այգիներով, արգավանդ արտերով ու արոտատեղիներով: Ունեւոր գյուղ էր: Բայց քուրդ աղաները 80-90-ական թվականներին տնավորվել էին գյուղում եւ հալածում ու թալանում էին հայ

1 Մեյդո Պողոսի փոքր քույրը Մակոն, կոտորածներից հետո ապաստանել էր Բաթում քաղաքում. ապրում էր դուստր Խոսրովի ու թոռների հետ:

2 Տե՛ս **Հր. Տասնապետեան**, Հ. Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ. ընդհանուր ժողովը (1890-1924), Պէյրութ, 1988, էջ 79:

բնակչությանը, իհարկե, ոչ առանց թուրքական իշխանության հովանավորության:

Ահա Մուշ քաղաքից հարավ-արեւելք գտնվող այս ոչ հեռավոր գյուղում է իր մանկությունն ու երիտասարդությունը անցկացրել Սեյդո Պողոսը եւ 90-ականների կեսերին սկսել իր կռիվը սուլթանի դեմ: Մենակ չէր: Նրան ընկերակցում էր համագյուղացի Վարդանը, որը նույնպես մասնակցել է հայդուկային կռիվներին՝ սկզբնական շրջանում միշտ լինելով Սեյդոյի կողքին ու ֆիդայիների շարքում: Թե ինչպես ավարտվեց նրա կյանքը՝ հայտնի չէ: Պետք է ենթադրել, որ 17-18 տարեկանում նրանք եկել էին այն գիտակցության, որ թուրքի ու քրդի առաջ վիզ թեքելը հայի համար արժանապատիվ բան չէ, որ իրենք էլ կարող են, ի զորու են հակադարձել բռնությանը, ավերածություն, թալան, անօրինականություն անողներին: Գյուղում կային մարդիկ, որ 1893 թ. գործակցել են Միհրան Տամատյանի հետ: Դրանցից էր Սողոն[3]: Գյուղական հոտաղ, մաճկալ երիտասարդները զենք էին ձեռք բերել եւ Բաղեշ տանող ճանապարհին՝ «Ծծմակաքիթ» կոչվող վայրում, որը հեռու չէր Ալվառինջից, 1894-1895 թթ. հսկում էին ճանապարհը: Թուրք եւ քուրդ ճամփորդներին, Արաբոյի օրինակով, հարկադրում էին որոշակի գումար վճարել, թալանում էին, առավել մեղավորներին ու չինազանդվողներին վնասազերծում, այսինքն՝ վերաբերվում էին այնպես, ինչպես նրանք էին վարվում հայերի նկատմամբ: Այդ շրջանում Սեյդոն ու Վարդանը կատարում էին իրենց առաջին նշանակալից գործերից մեկը՝ վրեժխնդիր են լինում Սասունի Ս. Աղբերիկ վանքի վանահայր Ղազար վարդապետին դավադրաբար սպանող երկու քրդերից: Սպանությունը կատարվել էր թուրք կառավարության պատվերով ու գիտությամբ, որը նախատեսել էր վերացնել նաեւ Մշո Ս. Կարապետ վանքի վանահայր Վարդան վարդապետին, բայց ձախողվել էր: Ղազար վարդապետը Տարոն-Սասունում հայտնի հոգեւոր գործիչ էր, «ամբողջ Բռնաշեն գավառի յեղափոխական ղեկավարն էր, անոր մահը մեծ կորուստ էր հայ ժողովուրդի ազատութեան գործին համար»[4]:

Ռուբենի «Ցիշատակարաններից» մենք գիտենք, որ Սեյդոն ու Վարդանը մինչեւ 1900 թ. գործել են ինքնուրույն, անկախ, չեն ընդունել հովանավորություն եւ կապ չունեին կուսակցությունների հետ: Ջորավար Անդրանիկի «Առաքելոց վանքին կռիւը» գրքույկում իշխանությանը ներկայացված պահանջներից 8-րդը հետեւյալն էր. «Սուրբ Աղբերիկ վանքի վանահայր Ղազար վարդապետը դուք սպանել տիք երկու քիւրտերու ձեռքով, գիշեր ատեն վանքի դուռը բարեկամաբար ափ առնելով: Այդ երկու քիւրտերն ալ ես սպանել

3 Տե՛ս **Ռուբէն**, Հայ Յեղափոխականի մը յիշատակները, 1992, Երեւան, հ. 3, էջ 89:
4 Անդ, էջ 41:

տի»[5]: Այս խոստովանություն-փաստը պարզում է, որ Սեյդոն ու Վարդանը գործել են Անդրանիկի հրահանգով եւ կապված են եղել ֆիդայիների հետ՝ մինչեւ Սասուն գալը եւ ֆիդայի դառնալը: Այդ դեպքից հետո Սեյդոյի ու Վարդանի համբավը, որպես քաջ ու հանդուգն անձնավորությունների, տարածվում է ամբողջ Տարոն աշխարհում: Թուրք կառավարությունը հետապնդում է նրանց, բայց նրանք կարողանում են խուսափել լարված ծուղակներից:

Ինչպես ասացինք, մինչեւ հեղափոխության շարքերը մտնելը Սեյդոն ու Վարդանը ազատ, անկախ մարդ էին եւ չէին ենթարկվում որեւէ կուսակցության կամ խմբավորման: Բայց նրանք բարձր էին գնահատում Արաբոյին, Սերոբ Աղբյուրին ու Գեւորգին եւ գործում էին նրանց օրինակով: Հավանական է, որ այդ հանգամանքը նկատի ունենալով՝ երկուսին էլ Գեւորգը Ալվառինջից բերում է Սասուն, եւ նրանք դառնում են դաշնակցության անդամ: Կամաց-կամաց Սեյդոն ու Վարդանը համակերպվում են ազատագրական պայքարի կարգապահական կանոններին եւ դառնում են Մուշում ու Սասունում ճանաչված եւ հարգված ֆիդայիներ:

Պետք է ենթադրել, որ ազատագրական պայքարին հարելու եւ գաղափարական մարտիկ դառնալու ընթացքում մեծ է եղել Գեւորգի եւ ապա Անդրանիկի ազդեցությունը: Եւ բոլորովին պատահական չէր 1901 թ. Առաքելոց վանքի կռվին Սեյդո Պողոսի մասնակցությունը: Դա նրա առաջին լուրջ փորձությունն էր ֆիդայական պայքարում: Սեյդոն Առաքելոց վանք մտնող զինվորներից էր՝ Անդրանիկի, Գեւորգ Չավուշի, Հակոբ Կոտոյանի, Կորյունի, Կայծակ Վաղարշակի եւ մյուսների հետ: Ինչպես բոլորը, նա եւս կիսում էր վանքը գրավելու գաղափարը՝ որպես կառավարության դեմ բողոքի արտահայտություն ու պահանջատեր:

Սուլթանական օրավուր թանձրացող բռնությունների պայմաններում ֆիդայիների նպատակն էր «միջոց մը գտնել... հայ ժողովուրդին վրայ ծանրացող տառապանքը մեղմելու եւ թրքական ու քրդական հարստահարութիւններն ու հալածանքները դադարեցնելու, քանզի Քիւրտն ու Թուրքը ազատ եւ անվախ հայ գիւղերուն մէջ իրենց ոճիրներն ու ամեն տեսակ բռնութիւնները կը գործադրէին, եւ կառավարութիւնը այս բոլորը տեսնելով չէր պատժէր, չէր սանձահարէր եւ չէր սաստէր: Կառավարութիւնը ոչ միայն իր աչքերը կը գոցէր չի տեսնելու եւ չի լսելու այդ ոճիրներուն պամութիւնները, այլ ներքնապէս կը քաջալերէր եւ կկազմակերպէր զանոնք, յառաջ տանելու իրենց հայահալած ու հայաջինջ քաղաքականութիւնը, պսակելով անոնց կուրծքերը պատուանշաններով եւ առանձնաշնորհումներ պարգեւելով»[6]:

Այդ միջոցներից մեկը եղավ Մշո Առաքելոց վանքի գրավումը: Ֆիդայի-

5 **Անդրանիկ**, Առաքելոց վանքին կռիւը, Երեւան, 1992, էջ 41:
6 **Անդրանիկ**, Առաքելոց վանքին կռիւը, 1992, Երեւան, էջ 3:

ների պահանջները բխում էին ազգի կենսական շահերից: Քսանմեկ օր տղաները հմտորեն պաշտպանվեցին եւ անվտանգ հեռացան վանքից՝ մտածված, խելամիտ գործողությունների շնորհիվ: Կարեւորը հայ բնակչության դրական արձագանքն ու ոգեւորությունն էին: Անդրանիկի հետ փորձված կռվողներ, նվիրված հայդուկներ էին Գեւորգ Չավուշը, մշեցի Վաղարշակը, Հակոբ Կոտոյանը, Մոկունաց Ղազարը, Սեյդո Պողոսը, Գոմսա Կորյունը (Իսո), Վարդանը (Սեյդոյի զինակից) եւ ուրիշներ[7]: Անդրանիկն իր հուշերում ոչ մեկին չի առանձնացնում: Պետք է նկատենք, որ վանքից հեռանալու ծրագիրը մշակելով եւ փորձարկելով՝ որոշվեց վանքից դուրս եկող հնգյակի մեջ ընդգրկել Անդրանիկին, Գեւորգին, Հակոբ Կոտոյանին, Կայծակ Վաղարշակին եւ Սեյդո Պողոսին: Սա նշանակում է, որ Սեյդոն, որպես ռազմիկ, արդեն իրեն դրսեւորել էր եւ վայելում էր հրամանատարության ուշադրությունը: Ինչ վերաբերում է վանք մուտք գործելու եւ անվնաս դուրս գալու գործողություններին եւ Առաքելոց վանքի կռվի նշանակությանը, պատմագրության մեջ դա հայ ազատամարտի երեւելի դրվագներից է: Սեյդոյի մասնակցությունը պատմական այս կարեւոր իրադարձությանը նրա կենսագրության նկատառման արժանի էջերից է:

Առաքելոց վանքի կռվից հետո էլ ֆիդայական ընդվզումները շարունակվում էին, որովհետեւ գյուղերում հանդարտություն չկար. թուրքերն ու քրդերը շարունակում էին իրենց սովորական ընթացքը, եւ հայության բողոքները անուշադրության էին մատնվում: Գերմարդկային ճիգեր էին հարկավոր այդ անագորույն լուծը տանելու:

1901 թ. դեկտեմբերի 22-ին Գեւորգ Չավուշը Սասունից իջնում է Մշո դաշտի հայ կաթոլիկ Նորշեն գյուղը: Կառավարությունը հարյուրապետ Հյուսեինի գլխավորությամբ զորք է ուղարկում: Սկսվում է կռիվ: Ֆիդայիները կրակ են բացում եւ մեկ տասնյակ ասկյարների հետ սպանվում են հարյուրապետը եւ Հյուսեինը, որ կազմակերպել էր Սասունի Սպաղանք գյուղի կոտորածը եւ Պշարե Խալիլի հետ մասնակցել էր հայդուկ Սերոբի սպանությանը: Ֆիդայիները անվնաս հասնում են Սասուն: Գեւորգի հետ կռվող տղաներից էին Կայծակ Առաքելը, Սեյդո Պողոսը, նրա ընկեր Վարդանը, Գոմսա Կորյունը եւ ուրիշներ[8]: Առաքելոց վանքի իրադարձությունից հետո այս կռիվը նույնպես ոգեւորություն եւ հույս էր ներշնչում:

Թվում էր, թե 1902-1903 թվականներին, երբ դադարել էին ֆիդայական կռիվները Սասունում եւ Հրայրի ու Վ. Մանվելյանի գաղափարները տարածվում էին ու դրանց շուրջ համախմբվում էին ժողովրդական ուժերը եւ նրանց կողմնակիցները. ժողովուրդը համեմատաբար խաղաղ էր: Թուրքական կա-

7 Տե՛ս **Ռուբէն**, հ. 3, էջ 53, 54:

8 Տե՛ս անդ, էջ 233, նաեւ՝ **Կարօ Սասունի**, Պատմութիւն Տարօնի աշխարհի, 1956, Պէյրութ, էջ 650-651:

ռավարությունը, սակայն, 1903 թ. վերջերին սկսել էր զորք կենտրոնացնել Սասունի շուրջը: Եւ, ի վերջո, նորից ծայր էին առնում հայ-թուրքական բախումները:

Սեյդո Պողոսը 1904 թ. Սասունի դիմադրական շարժման գործուն մասնակիցներից էր, բայց արդեն որպես տասնյակի հրամանատար՝ Գեւորգ Չավուշի կողքին: Գեւորգը գործում էր Սասունի հարավային եւ հարավ-արեւմտյան պաշտպանական դիրքերում, որտեղ կային հայկական գյուղեր: «Գեւորգը՝ ուժեղացած Մուրատի եւ Սէյտօ Պօղոսի տասնյակներով»՝ աշիրապետ Քոռ Սլոյի հետ բախվում է հունվարի 17-ին Հեղին գյուղի մոտ: «Քիւրտերն ու թուրքերը ետ կը մղուին եւ կը նահանջեն»[9]: Գեւորգի կարգադրությամբ՝ «Առանց կռուի կը դատարկուին Հեղին, Ընկուզնակ, Արտկոնք, Սեւիթ եւ Արսիկ գիւղերը»[10], ապահով տեղ փոխադրվելու համար: Սեյդո Պողոսն իր տասնյակով մնում է հսկելու հակառակորդի տեղափոխությունները: «Նա կը յարձակի Սալիհ անունով քիւրտին վրայ, որ շատ մը ոճրագործութիւններ էր ըրած եւ մասնաւորապէս շատ մը հայեր էր սպաննած, կը գերէ զայն եւ կը գնդակահարէ: Երբ ժողովուրդը ամբողջութեամբ եւ ապահով կը նահանջէ Իշխընձորի դիրքերը»[11]:

Ինչպես որոշել էր Հրայրը, Մշո դաշտի գյուղերը սկզբում չէին մասնակցում Սասունի ազատամարտին: Բայց ապրիլի կեսերին Սասունի վիճակը տագնապալի դառնալով՝ սասունցիները դիմում են Մշո դաշտի հայության օգնությանը: Ապրիլի 17-ին դաշտի Մկրագոմ, Դրմերտ, Բերդակ, Կուրավու գյուղեր են ուղարկվում Սեյդո Պողոսը եւ Առաքելը՝ ոտքի հանելու ժողովրդին: Սեյդոն Առաքելի ու զինվորների հետ, ինչպես պատմում է Ռ. Տեր-Մինասյանը, դժվարությամբ են հասնում իրենց նշանակված տեղը: Ժամանելու հաջորդ օրը Սեյդոն նկատում է, որ թշնամու մի զորամաս՝ ռազմամթերքով բեռնավորված, շարժվում է դեպի Սասուն: «Հակառակ անոր, որ Բերդակէն կէս ժամ հեռաւորութեան վրայ հայ գիւղերու մէջ հազարաւոր թուրք զինուորներ էին կեդրոնացած, Սէյտօ Պօղոս կը յարձակի ռազմամթերք տանող զօրամասի վրայ»: Նրանք փախուստի են մատնում թշնամուն եւ վերցնելով հնարավորին չափ ռազմամթերք՝ հեռանում են լեռները[12]:

1904 թ. ամռանը կազմակերպչական գործերով Մշո դաշտի գյուղերն այցելելուց հետո Հրայրի հետեւորդ, հին ֆիդայի Գոմսի Կորյունը (Իսո) գալիս է հայրենի գյուղ: Նրա հետ էին Սեյդո Պողոսը, Գոմսա Մելիքը, Մոսոն եւ տասնյակ կռվողներ: Քուրդ դոլամները, տեսնելով Սեյդոյին մենակ կանգնած, հարձակվում են նրա վրա: Վերջինս կռվի է բռնվում: Օգնության է հասնում

9 **Ռուբէն**, հ. 3, էջ 266:
10 Անդ, էջ 267:
11 Անդ, էջ 267:
12 Անդ, էջ 296, 297:

Կորյունը: Նրանք գնդակահարում են վաշխառու Հաճի Ալիին, նրա մերձավորներին, քանդում են Գոմսում ապօրինի կառուցած նրա առանձնատունը ու փախցնում մնացած քրդերին[13]:

1904 թ. Սասունի գոյամարտի անկումից հետո՝ մայիս-հունիս ամիսներին, կռիվներ են տեղի ունենում Մշո դաշտի Բերդակ, Դերիկ, Կուրավու, Մկրագոմ, Գոմս, Գոմեր, Տերգեւանք, Շեյխյուսուֆ գյուղերում, ուր ֆիդայիները իրենց հանդուգն գործողություններով կարողանում են դիմադրել, պատժել հետապնդող թուրքական ուժերին ու քուրդ աշիրապետներին: Բայց օրավուր ծանրացող նյութական դժվարությունները եւ զինամթերքի անբավարարությունը հարկադրում են գոյամարտի ղեկավարներին միջոցներ փնտրել ծանր վիճակից դուրս գալու համար: «Այս նոր ուղղութեան ոգին կը դառնան Վարդան վարդապետը, Տարոնեցին (Տատրակ կամ Գեղամ Տէր-Կարապետեան), Գոմսա Կորիւնը (Իսօն), Մշեցի Համազասպը, Մոկունքցի Ղազարն ու Դաւոն, Ղըզլաղաճցի Սարգիսը եւ ուրիշներ»[14]: Տարոնեցին (Գեղամ) Դուրան-Բարձրավանդակի վիճակի եւ հեղափոխական շարժման պատճառների մասին տասնվեց կետից բաղկացած հիշատակագիր է ուղարկում պատրիարքարան: Հիշատակագիր է ուղարկվում նաեւ Անգլիայի, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի հյուպատոսներին, որ ստորագրում են Անդրանիկը (Պարույր), Գ. Չավուշը (Սարհատ) եւ Տարոնեցին (Գեղամ)[15]:

Նույն ժամանակ ֆիդայիները հավաքվում են Մառնիկի սարում՝ քննարկելու երկրից, հարազատ վայրերից հեռանալու, երկիրն ու ժողովրդին թողնելու ցավագին խնդիրը: Առժամանակ նրանք պետք է հեռանային, այդպես էր հանձնարարված: Այդ հավաքից հետո սասունցի ռազմիկներից շատերը վերադառնում են իրենց տները, մյուսները՝ մոտ 130 հոգի, 1904 թ. հուլիսի երկրորդ կեսին Գեւորգի ու Անդրանիկի հետ մեկնում են Վասպուրական[16]: Ֆիդայիների մեջ էր նաեւ Սեյդո Պողոսը: Ախլաթից ոչ հեռու՝ Շամիրամ գյուղում, նրանց վրա է հարձակվում նախօրոք այստեղ բերված թուրքական զորքը: Կռվին մասնակցում էին Գեւորգ Չավուշը, Անդրանիկը, Սեբաստացի Մուրադը, Գոմսի Կորյունը, Հակոբ Կոտոյանը, Սեպուհը, Սմբատը եւ ուրիշներ: Անընդհատ համալրվող թուրքական զորքերին մինչեւ մութն ընկնելը դիմադրելով (օգոստոսի 13)՝ ֆիդայիները անցնում են Դատվան: Այստեղից էլ՝ հայերից վերցված նավակներով ուղղվում են Աղթամար կղզի, որտեղ Վանից գալիս են Վահան Փափազյանն ու Իշխանը: Բարեբախտաբար, այսօր հազվագյուտ հնարավորություն ունենք պատկերացում կազմելու այն հոգե-

13 Տե՛ս անդ, էջ 303:
14 Անդ, էջ 310:
15 Տե՛ս անդ, էջ 308:
16 Տե՛ս անդ:

կան վիճակի մասին, որում գտնվում էին երկրից տարագրված ֆիդայիները: «Արիւն-կրակէ դուրս եկած» հայդուկները, որ տեսել էին տառապանք ու վիշտ եւ դրանով էլ արժանի էին պաշտամունքի եւ «երկիւղած խոնարհութեան», չէին կարող հասկանալ, որ աշխարհում «դեռ կան խաղաղ անկիւններ», ահավոր մղձավանջից ազատ մարդիկ, «ընտանեկան հաշտ հարկին տակ անհոգ քնանալ», չեն լսվում թնդանոթների, հրացանների ձայները, քրդերի վայրենի ոռնոցները: «Կուզէին պատմել մեզ անպատմելի նախճիրը, որ գործեց թշնամին... կուզէին սիրտերու վրայ դիզուած յորդ ցաւերը, իրենց ժողովուրդին կրած տառապանքը» պատմել: «Արիւնի աշխարէն» եկած այդ «հայրենամոլ հայդուկները» անընդհատ մրմնջում էին. «Ա՜խ, մըր անուշ երկիր տուշմընի ձեռքը թողինք» եկանք[17]: Որպեսզի Տարոնի ժողովուրդը չհուսալքվի ու հավատը չկորցնի հեղափոխության նկատմամբ, հարմար է համարվում հեղինակավոր մի խումբ ուղարկել Տարոն: Երբ հարց դրվեց, թե ո՞վ պետք է վերադառնա, առաջինը արձագանքեց Գեւորգ Չավուշը. «Ես կը դառնամ... Ո՞ւր պըտի էրթամ, չըխո Դուրանն է զիմ երկիրը. հոնի ծնուեր, հոնի պըտ մեռնիմ...»: Նրան ձայնակցում է Կորյունը[18]: Նրանք պետք է ընտրեին համապատասխան խումբ: Գեւորգի՝ «Ո՛վ կուզէ մեռնիլ, թող միանա մեզ» կոչին շատերն են արձագանքում, բայց ընտրվում են ընդամենը տասնհինգ հոգի[19]: Մնացած տղաները որոշ ժամանակ անց Անդրանիկի եւ Սեպուհի հետ անցնում են արտասահման, իսկ մյուս մասը՝ Քեռին, Հակոբ Կոտոյանը, Սմբատը, Վաղարշակը, Սեպուհը, Սեբաստացի Մուրադը՝ Արեւելյան Հայաստան՝ օգնելու Նիկոլ Դումանին, հայությանը՝ դիմագրավելու թուրք-թաթարական հայակեր բնազդներին:

1905 թ. փետրվարից մինչեւ 1906 թ. աշունը Արեւելյան Հայաստանում տեղի են ունենում հայ-թաթարական բախումներ եւ հայ բնակչության կոտորածներ: Արեւմտահայ զինական ուժերը՝ Հակոբ Կոտոյանը, Սմբատ Բորոյանը, Սեպուհը, Քեռին (Արշակ Գաֆավյան), Առաքելը, Սեբաստացի Մուրադը եւ շատ ուրիշներ օգնության են մեկնում իրենց արեւելահայ քույր-եղբայրներին, ինչպես նաեւ Սասուն, Մուշ, Վասպուրական էին գալիս արեւելահայ երիտասարդ կամավորներն ու գաղափարական գործիչները եւ նյութապես ու զենքով սատարում դժվարության մեջ գտնվող իրենց ազգակիցներին: Հայությունը դառնում էր մեկ միասնական ամբողջություն: «Անվանի ռազմիկներն իրենց հետ Կովկաս բերեցին, անհատական քաջությունից ու փորձառությունից բացի, մի շքեղ նկարագիր, որ նրանք վաստակել են նախորդ տարիների դյուցազնական սխրանքներով: Վահագնատիպ այդ այրերի անունների հի-

17 **Վահան Փափազեան**, Իմ յուշերը, Պոսթըն, 1950, էջ 315-317, 318:
18 Տե՛ս անդ, էջ 319:
19 Տե՛ս **Ռուբէն**, էջ 313:

շատակումն անգամ պատկերացում էր ստեղծում՝ Կովկասում ովքեր էին ներկայացնում Սասնո հերոսական սերունդը»[20]:

Այդ սերնդի աչքառու ներկայացուցիչների մեջ էր Սեյդո Պողոսը՝ Գեւորգի ու Անդրանիկի քաջ զինվորը: Բարեբախտաբար, Սեյդոյի կարճատեւ կյանքից որոշ պատառիկներ են մեզ հասել Ռուբեն Տեր-Մինասյանի «Յիշատակարանների» եւ Վահան Փափազյանի հուշերի շնորհիվ, որ գաղափար են տալիս նրա ֆիդայական գործունեության եւ կյանքի մասին: Նման մի պատառիկ է նաեւ Կոմսի (Վահան Փափազյան) «Խոնարհ հերոսներ» գրքից (1966, Դ. գիրք, էջ 63) Հր. Սիմոնյանի բերած մեջբերումը: Փափազյանը մեզ է փոխանցել կովկասահայ եղբայրներին օգնելու բուռն ցանկությամբ համակված այդ հերոսի հոգեկան խռովքները: «Սէյտոն անհանգիստ, կարծես փուշերու վրայ նստած ըլլար: Կովկասեան կռիւներու լուրերը Վան հասան: «Հայտա՛, ճամբեք ընծի տղեքներու խետ, ինոնք խայ քրիստոնեայի ուղուրին կը կռուին, արին կը թափին, ես լէ խանգիստ նստիմ Վանայ ջեօջ աղաներու խետ... Աստօծ կապուլ (կներէ - Հ. Պ.) կէնէ՞: Եկաւ, շատ պնդեց. հանգիստ չթողուց. հարկադրուած ճամբեցինք Կովկաս»: Որոշ ժամանակ անց՝ 1905 թ. հունիսին, Նիկոլ Դումանը Սեյդո Պողոսին ուղարկում է Շարուրի Խանուխլարի շրջանը՝ ղեկավարելու թուրքերի դեմ տեղացիների պաշտպանությունը: Խանուխլարի կռիվների ժամանակ Սեյդոն ցույց տվեց «իր քաջութիւնը եւ ղեկավարելու մեծ շնորհքը: Ան փրկեց Խանուխլարի ամբողջ շրջանը անխուսափելի ջարդէ: Մեր ժողովուրդը լքուած էր եւ պարտուողական ոգիով ներշնչուած՝ թաթար բէկերու շնորհին ապաւինելու տրամադրութիւն ունէր, երբ Սէյտոն հոն չէր դեռ: Ան կրցաւ, իր սակաւաթիւ ուժերով, պաշտպանել գիւղը»[21]:

Արեւմտահայաստանից մեկնող մարտիկները գործում էին Արեւելյան Հայաստանի տարբեր գավառներում: Շարուրի Խանլուխլար գյուղի շրջակայքի հայերի պաշտպանությունը, ինչպես ասացինք, ղեկավարում էր Սեյդո Պողոսը: Հայտնի չէ, թե ինչպես են ընթացել մարտերը եւ ինչպես է գլխավորել այդ մարտերը Սեյդոն, բայց հայտնի է, որ տեղի վեց գյուղի հայ բնակչությունը երախտապարտ է եղել նրան կոտորածներից իրենց փրկելու համար: Այդ շրջանում Սեյդոյի գործունեության նշանակության եւ ժողովրդի տված գնահատականի մասին վկայում է հետեւյալ հուշը. «Գիշերով Խանուխլարի ճամբով գացինք. Սէյտոն կուզէինք տեսնել: Սէյտօ Պօղոսը դարձած էր պաշտամունքի առարկայ, բայց մնացած էր նոյն պարզ ու համեստ մարդը: Գիւղացի տղաներ երբ կը պատմէին անոր հերոսութիւնները, Սէյտոն ծուռ-ծուռ կը նայէր ու ակռաներու մէջէն կը մռլտար. Ըհէ՛, ըհէ՛, ժղլէ՛, ժղլէ՛ (շատախոսել), տղա... յորի՞ կը խօսաս, կամչըցնուս, մալէ խրապ (աւեր տուն):

20 **Հր. Սիմոնյան**, Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք II, 2003, Երեւան, էջ 172:
21 **Վ. Փափազեան**, Իմ յուշերը, էջ 433:

Եւ յիրաւի, այդ շատ մեծ գիւղը եւ շրջանի գիւղերը անսահման ոգեւորութեան մէջ էին: Թաթարները մեծ ջարդ էին կերեր եւ հանգիստ էին թողուցեր: Լքուած, ընկճուած ժողովուրդի ոգին Սէյտոն էր բարձրացուցած եւ ուժերը ղեկավարած[22]»: Այս մեջբերումները առանց համառոտելու, նույնությամբ ենք ներկայացնում որպես անգնահատելի, մեծարժեք պատմական եզակի նմուշներ:

Եղբայրական պարտքը կատարելուց հետո արեւմտահայ ռազմիկների մի մասը վերադառնում է երկիր: Բաժանման պահերը հատուկ նշել են մեր պատմաբան հեղինակները՝ գրելով, թե «նրանց ճանապարհում էին երախտագիտութեան արցունքներով»[23]: Կովկասյան թուրք հրոսակների դեմ կռիվներին արեւմտահայ զինյալների մասնակցությունը հպարտության զգացում էր առաջացնում Թուրքիայի եւ գաղութների հայերի սրտում[24]:

Սեյդոն ինչպես անհամբեր էր արեւելահայ եղբայրներին օգնության հասնելու ժամանակ, այնպես եւ կարոտով էր լցվել երկրից հեռանալուց հետո: Կռիվները ավարտելով՝ ժամ առաջ ձգտում էր լինել հայրենի եզերքում: «Հորի՞ մնամ հոտի, - ասում էր նա, - ընծի երկիր պիտի ճամբէք... երթամ մըր աւեր Դուրան, մըր սարերուն հովին տակ պառկիմ, երեսս շաղաթաթախ կանանչ խոտերուն քսիմ, մըր զուլալ ջրերու մէջ լուացիմ, զիմ ոչխարներուս աչքերը պագնեմ, չըմ կինա, մնացի՞ին ոչխար, զիմ «ղաւալը» փչիմ ու փառք տամ Աստուծոյ...»[25]: Նա կապված էր իր հողի հետ որդիական սիրով եւ հանուն այդ նվիրվածության պատրաստ էր կյանքը տալու: Այդպես էլ եղավ: Սեյդոն բախտ չունեցավ հրացանը ձեռքին վախճանվելու, որ ամեն մի իսկական ռազմիկի երազանքն է:

Սեյդոն Շարուրից վերադարձավ մինչեւ 1907 թ. մայիս ամիսը՝ Սուլուխի կռվի նախօրյակին, եւ նորից զինվորագրվեց Ռուբեն Տեր-Մինասյանի ֆիդայական խմբին: Մինչեւ Սուլուխ գյուղ գնալը, որտեղ Գեւորգ Չավուշն էր իջեւանել, Սեյդոն մշեցի Ռուբենի, ցրոնցի ֆիդայիներ Էլոյի, Խուշոյի եւ Մխիկի հետ Ցրոնք գյուղում էր, ապա Ռուբեն Տեր-Մինասյանի հետ գնում է Սուլուխ գյուղ: Թուրքական զորքի առաջխաղացման հետ՝ Սեյդոն ու սուլուխցի Մեսրոպը ստուգում են, թե կռվից հետո գյուղից հեռանալու համար որքան ձի կարող են հայթայթել. ընդամենը տասներկու ձի, որը չէր բավարարում նրանց պահանջները: Սեյդոն համաձայն չէր, որ ֆիդայիների մի մասը հեռանա, եւ ասում էր. «Ես գիւղը պիտի մնամ, կռիւ է, թող կռիւ լինի, էլ ինչո՞ւ թողնեմ գիւղն ու մաս ընկերներըս թշնամու ձեռքին»: Կռվի ժամանակ Սեյդոն գտնվում էր Ռուբենի դիրքում՝ խարապայում՝ ալիզոնանցի Մուքոյի,

22 Անդ, էջ 440:
23 **Հր. Սիմոնյան**, նշվ. աշխ., էջ 48:
24 Տե՛ս անդ, էջ 174:
25 Անդ, էջ 48:

ցրոնցիներ Էլոյի, Մխիկի, սուլուխցի Սիմոնի հետ: Ռուբենի բնութագրմամբ՝ «Մեր զինուորներէն քիչերը միայն Գալէի, Սէյտօ Պօղոսի նման անտարբեր (հավասարակշռությունը պահպանել - Հ. Պ.) կրնան մնալ» այն դեպքում, երբ թշնամին քթի տակ էր: Սեյդոն հանաք էր անում եւ ցույց տալիս թշնամու ձիավորներին՝ Գեւորգի դիրքերի դիմաց: Բայց «նորէն մեքենայ է դարձած եւ բոլորս արագ-արագ հրացանները կը պարպենք դէպի թշնամին: Հատ-հատ նշան կը բռնենք ու կը խփենք»[26]: Սեյդոն աշխույժ էր, ոգեւորում էր տղաներին, բայց ինքը սառնարյուն էր ու նախաձեռնող: Լռում է Գեւորգի դիրքը: «Վալլահ Գէորգ մեռած է», շշնջաց վիրաւոր Սէյտօ Պօղոսը: Ան փորձառու էր, գիտէր, որ Գէորգ առանց մեռնելու չէր հանձներ... տան դիրքը»[27]: Թշնամու հախուռն հարձակումից խուսափելու համար որոշում են մեկ-մեկ դուրս գալ դիրքերից, միանալ մյուս ընկերներին: Առաջինը դուրս է նետվում Սեյդոն, նրան հետեւում են մյուսները եւ Ռուբենը: Հասնում են վիրավոր Գեւորգին: «Գէորգի եւ Գալէի մէջտեղ նստած է Շենիկի Ղազար սգաւոր. Սէյտօ Պօղոսը յենած է պատին: Երբ կը մօտենամ անոր, Սէյտօն կ՚ըսէ. «Գալէն պրծել է, Գէորգը դեռ ողջ է»: «Գէորգը կապեցին ձիու վրայ, ան իր ցաւերէն նուաղած՝ ձայներ կը հանէ, ինչ որ բան կուզէ ըսել, բայց չի հասկացուիր... Յառաջապահ կը դառնայ Շենիկի Ղազար՝ 10 հոգով, անոր կը հետեւիմ ես՝ 20 հոգով՝ իմ ետեւէն Սէյտօ Պօղոսը՝ վիրաւոր Գէորգի հետ, կը ընկերանան անոր մշեցի Ռուբէն եւ Տիգրան (ալչջանցի - Հ. Պ.), իսկ ասոնց ետեւէն գիւղի ամբողջ ազգաբնակչութիւնը, ամբողջ գիւղը մօտ 120 տնւոր, բացի 8-10 պառաւ կիներէ եւ 1-2 հիւանդներէ: Ժողովուրդին ետեւէն զինուած կու գան Մխիկ, Էլօ, Մոսիկ եւ ընկերները՝ մօտ 40 հոգի»[28]:

Գեւորգի վերջին խոսքը՝ ուղղված Ռուբենին (երբ վերջինս համբուրում էր նրան). «Ան գլխի ընկաւ, նուաղած ձայնով կրցաւ ըսել «Դո՛ւ ես, լմնցած է, ջանդկի մը համար խումբը մի վտանգէ, անցէք գնացէք. Էղսոն եւ Վարդգէսը քեզի ամանաթ...»[29]: Գեւորգ Չավուշի հոգու մեծությունն է այստեղ ընդգծվում. նախ խմբի տղաների անվտանգության հոգսը, ապա՝ իր Վարդգես զավակի ու կնոջ Եղսոյի ճակատագիրը:

Սուլուխի կռվից հետո Սեյդոն մի խումբ ֆիդայիների հետ գնում է Մուշի Բերդակ գյուղը:

Ֆիդայիների վիճակը Տարոն աշխարհում գնալով անտանելի էր դառնում: Դժվարություններ կային դիմագրավելու կառավարական հալածանքներին, քրդական ճնշումներին, հետապնդումներին, հազար ու մի անարդարություններին: Էլ չխոսենք այն մասին, որ բնակչության մի մասի մեջ նվազել էր հավա-

26 **Ռուբէն**, նշվ. աշխ., հ. IV, էջ 166:
27 Անդ, էջ 68:
28 Անդ, էջ 172-173:
29 Անդ, էջ 174:

տը ֆիդայական շարժումների նկատմամբ (առհասարակ, հասարակության մեջ միշտ էլ եղել են ու կան անկայուն տարրեր, որոնցից ամեն ինչ սպասելի է. սրանք հետամուտ են միայն իրենց չնչին գոյությանը): Կառավարական ուժերը կարեւոր ճանապարհները վերցրել էին խիստ հսկողության տակ: Նյութական առումով նույնպես՝ գյուղացին չէր կարողանում ըստ հարկի բավարարել ազատամարտիկների առօրյա պահանջները: Պետական ճնշումները մեղմելու համար ազատագրական պայքարի ղեկավարությունը փորձում էր առ ժամանակ երկրից հեռացնել կռվող ուժերը եւ թույլ չտալ դրսից նոր ուժերի մուտքը: Բայց կար մի ուրիշ խնդիր: Շարժման ղեկավարությունից այդ շրջանում գոհ չէին նաեւ ֆիդայիները: Օրինակ՝ Ռ. Տեր-Մինասյանը առաջին հերթին առանձնացնում էր Սեյդո Պողոսին, որին նա համարում էր իր հույսը. «Ան սառնարիւն ու քաջ զինուոր էր եւ տեսալներ կային հաւատալու թէ պիտի կարողանայ ի վերջոյ զինուորական ղեկավար դառնալ այս շրջանին»[30]:

Ս. Կարապետի վանքի՝ անտառում տեղի ունեցած խորհրդակցությանը Ռուբենից հետո խոսք է վերցնում Սեյդոն: Քննարկվում էր ֆիդայիների եւ ժողովրդի փոխհարաբերությունների ու նրանց հետագա ճակատագրի խնդիրը: Նրաց պահանջները հետեւյալներն էին. պետք չէ հակվել միայն դեպի ժողովուրդը՝ անտեսելով ֆիդայիներին, քանի որ եթե ֆիդայու հոտը կտրվի այս աշխարհից, մեկ էլ տեսար ժողովուրդը բռնի հեղափոխության եւ նրա ղեկավարի գլուխը եւ ճետի գլխի նման թռցնի: Եթե անհրաժեշտ է հեղափոխությունը շարունակել Տարոն աշխարհում, ուրեմն ֆիդայու պատիվը պետք է բարձր պահել: Երբ գյուղերում հիշեցնում էին, որ իրենք ֆիդայի են, ոչ սովորական մարդիկ. «Ձայներդ կտրէք, պարոնին կ՚ասենք, ձեզ կը քշէ: Ախր չեղաւ, պարո՛ն, էդ ժողովուրդը երեկ էր, որ Աստուած մոռացած էր, մի քանի ամիս չկայ որ զօռով բռռով հաւատի բերինք... մկա ինչը փոխուեցաւ, որ նրանք եղան մեր իշխողները, մենք էլ դառանք ոչինչ: Գիւղ կը գնանք կըլկըլ կը գցեն առաջդ, կարծես թէ դրան շունը լինենք: Գրպանդ կը նայիս, փող չկայ, որ ուտելու հաց գնես... Հաւատա, պարոն, ժողովրդին իման (հավատ - Հ. Պ.) չկայ, էդ ճամբայիցը վազ կեցիր. վըր մեր գլխուն, վըր մեր աչաց մեր մեծաւորն ես»[31]: Սեյդոյի այս խոսքերի մեջ, ինչպես գրում է Ռ. Տեր-Մինասյանը, «շատ դառն ճշմարտութիւններ կային, արիւնոտ փորձառութեամբ խրատուած»:

Այդ շրջանում Հրայրի գաղափարները (որոնց կողմնակից էին Վարդան վարդապետը, Գեղամ Տեր-Կարապետյանը, Գոմսա Իսոն (Կորյուն), Մոկունքցի Ղազարն ու Դավոն, մշեցի Համազասպը, ղզլաղաճցի Սարգիսը) իրականացնելը, համաժողովրդական ապստամբության նախապատրաստվելը կամ ժողովրդական շարժման վրա հույս դնելը թուրքական միջավայրում բանա-

30 **Ռուբէն**, նշվ. աշխ., հ. IV, էջ 270:
31 Անդ, էջ 271:

կան չէր: Թուրքիան կանոնավոր պետություն չէր, որտեղ հնարավոր լիներ համընդհանուր ըմբոստություն կազմակերպել: Դարերով կարծրացած հակառակորդի դեմ երկու տարին մեկ ռազմավարություն փոխելը նույնպես արդարացված չէր: Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ Սեյդոյի ու նրա նման մտածողների տեսակետները տվյալ պահին ավելի բնական ու բանական էին, քանի որ կառավարությունը հայության նկատմամբ թշնամական վերաբերմունքը չէր փոխում, այն փոխելու որեւէ միջոց այլեւս չէր մնացել: Հետեւաբար, սեյդոները դժգոհելու տեղ ունեին: Ի վերջո, ինչո՞ւ ժողովրդական շարժումը հակադրել ֆիդայական շարժմանը, որը գուցե եւ ամենաուղիղ ճանապարհն էր ստեղծված իրավիճակում ինչ-որ բանի հասնելու:

Մեր պատմաբաններից գրեթե ոչ մեկը ազատագրական պայքարի ուղղությունների վերաբերյալ հստակորեն չի հանգել որեւէ որոշակի եզրակացության: Ավելի ճիշտ, շատ են արծարծել այդ խնդիրը, բայց որեւէ արդյունքի չեն հասել: Նույնիսկ Հր. Սիմոնյանը, որ իր «Անդրանիկի ժամանակը» արժեքավոր գրքում հանգամանորեն ներկայացրել է ազատագրական պայքարի այդ երկու ուղղությունները, որոշակի եզրակացության չի հանգում: Հրայրի տեսակետները տեսականորեն առաջադիմական էին, հիմնավորված, հավասարակշռված, բայց ոչ գործնական ու տրամաբանական տվյալ միջավայրի համար. Թուրքիան այն երկիրը չէր, որտեղ բնական, կանոնիկ երեւույթներ տեղի ունենային: Բացի այդ, նա վաղուց էր ծրագրել ոչնչացնել հայությանը բուն երկրում: Սխալ չէին նաեւ հայդուկային շարժման կողմնակիցները, տվյալ դեպքում՝ ֆիդայիները: Պատահական չէ, որ Սերոբ Աղբյուրն ընդունում էր թե՛ մեկը, թե՛ մյուսը եւ ըստ այդմ գործում:

Ռուբեն Տեր-Մինասյանը միանգամայն իրավացի էր, երբ գրում էր, որ թուրք հեղափոխականի աչքում իսկ հայը ծառա է թուրքին ու թուրք կառավարությանը: Թուրք պաշտոնյան կամ քաղաքացին եթե շահագրգռված էր հեղափոխության հաղթանակով եւ կարգերի փոփոխությամբ, ապա ո՛չ հայերի իրավահավասարության համար[32]: Հետեւաբար, թուրքերի եւ քրդերի հետ դաշնակցելը, գործակցելը առնվազն երկար ու ոչ հարթ ժամանակի խնդիր էր, որ փայփայել ու փայփայում էին խնդրի անհեռանկարայնությունը չգիտակցող մի շարք հայ սերունդներ:

Այս ամենից հետո ֆիդայիների գործելակերպը վերանայելը դառնում էր ավելորդ: Նրանք ինչպես որ սկսել էին, ինչպես որ կային, այնպես էլ պետք է շարունակեին իրենց գործունեությունը բռնակալության եւ բռնակալների դեմ: Ճիշտ է, թուրք եւ քուրդ չարագործները ինչ-որ մի պահ զսպվում էին, որոշ ժամանակով կեղեքումը թուլացնում, ոճրագործությունները նվազեց-

32 Տե՛ս **Ռուբէն**, նշվ. աշխ., հ. IV, էջ 311:

նում, բայց, ընդհանուր առմամբ, հայը բոլորովին ապահով չէր. դա էր իրականությունը:

1907 թ. աշնանը Անդրկովկասից Տարոն ժամանեցին հեղափոխական գործիչներ Գարմենն ու Զավենը: Վերջինս մանավանդ տոգորված էր թուրքական պետության դեմ հայ-քրդական համերաշխության, միասնական ճակատով հանդես գալու ծրագրով, գաղափարով: Նա երիտասարդ, եռանդուն, ընկերվարական հովերով տարված գործիչ էր, տեղական պայմաններին անտեղյակ ու տասնամյակներով կռվող քաջերի փորձը քամահրող: Եւ դա էր պատճառը, որ ֆիդայիների հավաքներից մեկի ժամանակ նրանք փորձում էին ցրել Զավենի փուչ պատրանքները: «Պատռայ ես, պարոն (դիմում է Ռուբենին - Հ. Պ.), թազա հաւեր են ելած, երկաթէ հաւկիթներ կ՚ածեն, դժգոհեց Փետարայ Մանուկը: - Դու գիտես թէ, Զաւէն, քեզնով կը սկսի աշխարհ, քեզնով կը վերջանայ, ջահիլ ես, լաւ, պարապ կը ժղլես: Մենք գիտես թէ մեռնելո՞ւց կը վախենանք, չէ, վալլահ, էշ նահատակ լինելուց կը վախենանք: 20 տարի է, քու ասածիդ պէս քրտու մէջ կաշխատինք, հո՞րի չենք ազատուած, հո՞րի քրտեր կը մնան խայիներ: Բան չըս գինա, լաւ, Երկաթը, Թուխմախը, Արաբօն, Գէորգ, Հրայր, Կորիւն եւ միւսները կեանքը մաշեցին քրտերու համար: Սպաղանաց Մակար, Շենիկայ Մանուկ քրտերու հետ խալ ու խարզ էին (քեռի եւ քեռորդի), երեկ սպանուան քրտերու կողմից... քու ասած աշխատանքը քրտերու մէջ եղել է ու կայ... Նախանցեալ ձմեռ Գալէն, ես, Չոլօն Խութայ սարերում չէ՞ինք, Ղասմի մօտ: Գալէն մեռած է, Չոլօ, դու խօսէ, Ղազար, դու խօսէ, դու էլ մեր հետ էիր... Լաւ, մենք կը հասկնանք քրտու հետ աշխատելու արժէքը, մզիկ դաս մի տայ թէ իմա՞լ պիտի աշխատիլ, հուտա է ֆարխը (տարբերութիւնը), այդ էլ դու մեզնից պիտի սովրիս»[33]: Փետարա Մանուկի բարի հանդիմանանքին հետեւում է շենիկցի Չալոյի ամփոփիչ խոսքը. «Շանը բարեկամացիր, ճոկանը ձեռքդ պահիր... Կը հասկնա՞ք, սոխին քաղցրն չկայ աշխարհում, բայց սոխն աղեկ է լաւաշ հացի հետ»[34]: Նույնը հաստատեց Շենիկի Ղազարը[35]: Ֆիդայիների՝ խրատական ու բարյացակամ տոնով ասված այս խոսքերց հետո էլ Զավենը մնում է անդրդվելի, իր ասածին: Այստեղ որոշվում է քուրդ Ղասմի մոտ բանակցելու գնացող եռյակը՝ Զավեն, Զնդո, Սեյդո Պողոս, որին համոզել էր Զնդոն: «Ես հակառակ եմ Զաւէնի եւ Սէյտօ Պօղոսի գնալուն, - գրում է հեռատես ու զգուշավոր Ռուբենը, - թէ որ Վարդան վարդապետ, Տատրակ եւ Գարմէն համամիտ ըլլան ձեր երթալուն, ես պիտի չհակառակիմ... Վարդան վարդապետը թէ՛ դէմ էր անոնց երթալուն եւ թէ՛ կողմնակից, Տատրակը դէմ էր, Գարմէնը կողմնակից»[36]: «Մեր որոշումը երթալն է, - ըսին վճռական կերպով

33 **Ռուբէն**, նշվ. աշխ., հ. IV, էջ 322-323:
34 Անդ, էջ 323:
35 Տե՛ս անդ, էջ 324:
36 Անդ, էջ 326:

Զաւէն եւ Զընթօ, իսկ Սէյտօ Պողոս մտատանջօրէն կը համակերպէր անոնց: Ուղուր լինի, գացէք, եւ ուրախ զուարթ ճամբայ ելան Զընթօն, Զաւէնը, Յովհանը եւ անոնց ետեւէն անանման Սէյտօ Պողոսը»[37]:

Չորս օր հետո լուր է ստացվում, որ երեք հայորդիներն էլ Մշո Արտոնք գյուղում դավադրաբար սպանվել են Ղասըմ բեկի կարգադրությամբ՝ քուրդ Հսեի, Հասանոյի, որ ժամանակին կռվել էր ֆիդայիների կողքին, ու ղոլամների ձեռքով: Գնացել էին Զնդոյի ծննդավայր՝ քրդերի հետ դաշինք կնքելու: Բանակցություններից հետո Ղասըմը սեղան է բացում՝ հյուրասիրելու Զավենին, Զնդոյին եւ Սեյդո Պողոսին: Լավ խմում են: Քնելու համար իրենց հատկացված սենյակ է ուղեկցում Հասանոն, որը սուտ քուն է մտնում: Երբ տղաները քնում են, քուրդը հավաքում է նրանց հրացանները, ապա ներս է թողնում բեկի կողմից ուղարկված ղոլամներին: Եւ կատարվում է քստմնելի ոճիրը: Կիսաքուն Սեյդոն արթնանում է ու ձեռքը տանում հրացանին, որը տարել էին: Հետեւում է մի քանի կրակոց, եւ ամեն ինչ վերջանում է: Ամբողջ հայ ժողովուրդը սգաց իր հերոս զավակների կորուստը: Նույնիսկ քրդերը դատապարտեցին բեկի՝ տղամարդուն անվայել, տմարդի արարքը, իսկ հայությունը, հակառակ Զավենի պատրանքներին, կրկին համոզվեց, որ շան հետ ընկերություն անողը փայտը ձեռքից չպիտի գցի, որ այս հարցում ֆիդայիները ավելի քան իրավացի էին, որ Ռուբենի, Վարդան վարդապետի, Գեղամի (Տատրակի) կանխագուշակումները սխալ չէին:

Այսպես ողբերգականորեն ավարտվեց Սեյդոյի հերոսական ուղին: Քանի որ հայ պատմագրության մեջ Սեյդոյի կյանքին Ռուբեն Տեր-Մինասյանից ավելի հանգամանորեն ոչ ոք չի անդրադարձել ու գնահատել, որ եզակի է, մենք կհետեւենք նրա բնութագրումներին, որոնք միանգամայն ճիշտ են ներկայացնում ֆիդայու կերպարը:

Սեյդոն պատկանում է գյուղական միջավայրից ելած այն մեծությունների շարքին, որոնք ուսում չստանալով՝ հազար-հազար ուսումնականներից ավելին արժեն, նա սովորական մարդ չէր[38]: Ռուբենը նրան համարում է փառավոր անցյալ ունեցող ֆիդայի, որը մասնակցել է բազմաթիվ կռիվների՝ «բոլորն ալ փառահեղ»: Սեյդոն ուներ խոշոր, գեղեցիկ աչքեր, ոսկրոտ դիմագիծ, թիկնավետ էր, դիմացկուն եւ ուժեղ: «Բնաւորութեամբ շատ բարի էր, խեղճին չդիպչող, այլ անոր մասին հոգացող, ինկածին հարուած տուողը նամարդ մարդ էր անոր աչքին... այն բարի հայ քրիստոնեայ էր»[39]: Նա անողոք էր ցասման ժամանակ, «անտառի մէջ թափառող մեծասիրտ ասլան, որ կյօշոտէ այնքան, որքան պէտք է, կը հարուածէ այն, որ իր դէմ է»[40]: Չափված, կշռված էր նրա

37 Անդ:
38 Տե՛ս **Ռուբէն**, հ. IV, էջ 330:
39 Անդ:
40 Անդ:

խոսքը, որ քամուն չէր տալիս, գետին չէր գցում: «Ինչպէս խնամքով էր խօսքի մէջ, նոյնպէս խնամք կը տանէր դէպի իր շարժուձեւը... աղայի, իշխանի ձեւերն ունէր, համարձակ, հպարտ, տիրական: Անոր հագուստն ալ խնամքով էր ընտրուած, նոր, մաքուր, ճաշակով: Ամեն ինչ իր վրայ կը ներշնչէր որ առաջդ կանգնած է իշխան մը, ոչ թէ գեղջուկ ֆեդայի մը: Ո՞վ գիտէ, գուցէ այդ գեղջուկին մէջ յարութիւն էր առած մեր հին տոհմական իշխաններու մէկ սերունդը»[41]: Սեյդոն օժտված էր մեկ այլ հատկությամբ. եթե շատերը ամեն միջոցի էին դիմում երեւալու, հեղինակություն ձեռք բերելու համար, «Սէյտօն... իր էութեամբ կը պարտադրէր. ան չէր զգար իր ուժը, ոչ ալ կը զգացնէր, բայց շրջապատը միշտ այս հարցն ունէր՝ «Ի՞նչ կ՚ասէ Սէյտօն, ի՞նչ կ՚անէ Սէյտօն»[42]:

Նրա խոսքը ծանրակշիռ էր եւ ընդունելի: Այս բոլորի հիմքում ընկած էր Սեյդոյի մտավոր կարողությունը, մաքուր հոգին, որ Աստված նրան շնորհել էր, անսահման քաջությունն ու նվիրվածությունը իր հայրենիքին, ժողովրդին, հարազատ Տարոնին եւ հեղափոխությանը: Ըստ Ռ. Տեր-Մինասյանի՝ «Սէյտօի մահուամբ խոշոր սիւն մըն էր փլած Տարօնի աշխարհի մէջ»:

Ավելի լավ բնութագրել ու կերպավորել Սեյդո Պողոսին հնարավոր չէ:

41 Անդ:
42 **Ռուբէն**, հ. IV, էջ 330:

РЕЗЮМЕ

В статье представлены важные моменты жизни и деятельности одного из выдающихся представителей национально-освободительной борьбы Тарона и Сасуна конца XIX начала XX-го века Сейдо Погоса. Он воевал рядом с Андраником, Геворгом Чавушом, Акопом Котояном, Корюном из Гомса, активно участвовал в боях монастыря Аракелоц (Апостолов) города Муша, деревни Сулух, Ахтамара, руководил обороной армян во время армяно-татарских столкновений в 1905-1906 гг.

SUMMARY

The article presents some important fragments of the life and activity of one of the prominent representatives of Taron and Sassoun national-liberation movement Seydo Poghos in the end of XIX and the beginning of XX century. He faught together with Andranik, Gevorg Chavoush, Hakop Kotoyan, Koryoun of Goms, had an active participation in the combats of Arakelots (Apostols') monastery of Moush, village of Souloukh, Aghtamar and headed the defense of the Armenian during the Armenian- Tatar conflicts in 1905-1906.